



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~726 - 12/19/78~~

1158

11

542-3

4-33

No

Հրատարակչի Գրքարարի Կրթամարմնի. № 38

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՊԱՐՍԿԱԿԱՆ

Զ Ր Ո Յ Յ Ն Ե Ր

1001

72

79

Պ. Փ. Լ. Ս.
Տպարան «Արժ» Տ. ԿԱԶՄՈՅԱՆԻ
Իրավունք պահպանված է
1890

No

Հրատարակութիւն «Աղբիւր» եւ «Ծարագ» հանդէսների № 30

31-99

31

4

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՅ

Պ Ա Ր Ս Կ Ա Կ Ա Ն

Զ Ր Ո Յ Յ Ն Ե Ր

1001
1.119
446



12003

Թ Ի Փ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ «ԱՐՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
Խաղվաճ. պր. և ռ. Մարտիկաճ. փող. սահման:

1890

4406

ՅԵՄԵՆՑՅՈՍԹ

ՅԵՄԵՆՑՅՈՍԹ

Գ Գ Ե Ը Ը Ո Գ Զ

Дозволено цензурою, Тифлисъ, 1890 г. 12-го Октяб
Тип. „Ароръ“ Т. Я. Назарьянъ, уг. Гол. пр. и Бар.

80081

0001

Բ Է Ր Ա Մ

(ԵՒԷՐ Ա. . . Գ. ԵՆՆԻ ՅԻՂԱՏԱԳԻՆ)

Ա.

Զէնդ Քէրիմ-խանը մեծ Թազաւոր էր: Նա էր, որ շինեց Ներազը, անմահացրեց Հաֆիզին և Սադիին, որոնց առաջինը ս էր երգեց, իսկ միւսը՝ Ա ս ա լ ա ծ. քաջաւերեց Հեւէյին բանաստեղծին, որ բնութիւնը և բնութեան աւած գիւցազները գովարանեց, խանի գործերը և Ներազը անմահացրեց. Նա էր, որ Ներազին բանաստեղծական երկրի փոխեց, Իրանի և Թուրանի մուգապարանը շինեց. Քէրիմ-խանն էր որ 40 տարի Թազաւորեց իր ժողովրդի պաշպանութեան համար, 40 տարի կռիւ մղեց շրջապատող Թշնամի ցեղերի դէմ, միշտ յաղթեց և ստիպեց վայրենիներին՝ Թողնելու ուրիշ ունեցածով ապրելու փախազը:

Ոչ մի Թազաւորի ժամանակ չէին ծնել այնքան քաջ և յանդուգն մարդիկ, այնքան երկնային քաղցր խօսքերը մեղրի պէս մեզ մատուցանող բանաստեղծներ, այնքան լիէկլեաններ և պարթևներ, որքան ծնում էին Քէրիմ-խանի Թազաւորութեան ընթացքում:

Իրանը և թուրանը այդ ժամանակ շատ Ռիւստէմգալներ ծնեց, շատ փէհլէւաններ տւաւ, շատ զօրապետներ թշնամու վրայ սարսափ ձգեցին, շատ շ ա չ Ի ր ն ե ր * գեղեցիկը երգեցին, բայց ոչ մէկ փեհլէւան, ոչ մէկ զօրապետ և շայնը չըթողեց այն անմահ յիշատակը, ինչ որ թողեց դրախտային Բէրամը...

Բէրամն եմ երգում, նմ իրանի և թուրանի ժողովուրդ. ձեր անմահ փրկող եմ երգում, իր արիւնով ձեր հանդատութիւնը գնող, թշնամու դրօշը ոչնչացնող Բէրամն եմ երգում... Թոյլ կողմւածքով, բայց յանդուգն և յամառ զիւցազն եմ երգում, զիւցազն, որի կամքի ոյժը չեմ փոխել ոչ մի կողմի քաջութեան հետ:

Եւ իրաւ, Բէրամը բնութիւնից քաջութիւն չէր ստացել և ոչ Ռիւստէմգալի պահապան հրեշտակն ունէր իրան բարեկամ. Մի զիւղացի կին նրան աշխարհ բերեց, մի մօլլա նրա կաշին քերթելով Ղուրանն անգիր անել տւաւ, իր կողմի հայրը մաճ բռնել սովորեցրեց, իսկ իր ընկեր Ֆէրազն էր միայն, որ նրան սուր բռնելու վարժեցրեց:

Իր զիւղի լեռները և ձորերը եղան նրա աաջին աշխարհը, նժոյգների վրայ նստած սար ու ձոր չափցիկը եղաւ նրա ձիավարժութիւնը և զեղեցիկ Պաթման եղաւ պատճառ, որ Բէրամը թողեց իր զիւղը և գնաց ընկաւ Բէրլիմ-խանի ահարկու գնդի մէջ: Բէրամը Պաթմային կորցրեց իր սերոյ երկրորդ ամսումը. թշնամի Բ ա խ ա ի ա ր ն ե ր * մի օր վախցրին Պաթմային և ալլես Բէրամը ոչ տեսաւ նրան և ոչ բաց նրա մտան:

* Բանաստեղծ-երգիչներ:

** Մինչև այժմ գոյութիւն ունեցող մի վայրկնի ցեղը գտնուել է Արիւնլեան Պարսկաստանի ամուր վայրերը:

Սերտը դառնութեամբ լցւած թողեց նա զիւղը. Բախտիարների ղէմ վրէժով վառւած՝ մտաւ Նիրագ, Բէրլիմ-խանի պարտը գնաց, ընկաւ թագաւորի ոտքերը և աղապակեց.

Մեծդ թագաւոր, թոյլ տուր ինձ մտնել քո գնդի մէջ. Թագաւորը նայեց նրա նիհար և թոյլ կազմւածքին, ծիծաղեց և ասաց.

— Դեռ կրճր, պարոն «Փչեմ-ընկին», իմ գնդիս մի զինուոր քեզ նման հարիւրին կուլ կրտայ:

Բայց որովհետև Բէրամը շատ աղաչեց, Բէրլիմ-խանը փոքր ինչ մտածելուց լետոյ՝ ասաց նորան.

— Պարոն «Փչեմ-ընկին», դու տեսել ես իմ ծերունի հսկայ փէհլէւանին. լաւ, ես քեզ կընդունեմ իմ գնդի մէջ եթէ դու սիրա կանես դուրս դալ նրա ղէմ.

Բէրամը համաձայնեց և Բէրլիմ-խանը մունետիկ ձգեց Նիրագի վտղոցները ու ժողովրդին հրաւիրեց գալ մէյպանը հանդիսատես լինելու Բէրամ զիւղացու և խանի փէհլէւանի գօտեմարտութեանը:

Լցեց մէյպանը իշխաններով և հասարակ ժողովրդով, եկան այնտեղ փէհլէւաններ և զ օ ռ ի ա ն ա չ ի * աշակերտներ, եկաւ և զօրքը և բոլորը ծիծաղում էին տեսնելով նիհար պզտիկ Բէրամին, որ համամարձակում էր ա թ դ ա հ ա ** փէհլէւանի ղէմն ելներ:

Խանի փէհլէւանը կիսամերկ, հպարտ քայլւածքով կսկէր

* Իս մի յիմարիկութիւն է, որ փէհլէւանները անուժ են իրանց գլխաւոր մարմնամարդական կրթութիւնները. Պարսկաստանի ամեն քաղաքում կայ:

** Ահարկու, փիշաղամտն, հսկայ.

մտաւ և ծիծաղելով նայեց Բէրամին, որ հանդարտութեամբ շորերն էր հանուծ. սառն էր Բէրամի դէմքը, անյողողող նրա շարժւածքները և անշփոթ նրա վարմունքը:

Այդ զարմացրեց ահաբկու փէշլեանին.

— Մի՞թէ այս խեղճը հաւատացած է, թէ կարող է ինձ յաղթել... մոմուաց նա և վախ դգաց. վախ դգաց այն փէշլեանը, որ իր կեանքում հարկւր փէշլեանի դէմ էր ելել, հարիւրի քիթն ու բերանը ջարդել և ոչ մի անգամ էլ վախ չէր դգացել:

Հնչեց փողը, ածեցին շեփորներ և թմբուկներ, ծերունի փէշլեանը ըմբռն րկրք ստանալով, մի պտոյտ դործեց կրկէսի մէջ և մի կողմը կանգնելով, սպասեց Բէրամին: Եւ վազեց Բէրամը դէպի նա անշփոթ և գրկեց նրան: Նրկու ըմբռնեքը փոքր ինչ կպած մեծացին իրարու և ահա յանկարծ տեսան որ Բէրամը գտնուած է փէշլեանի բարձրացրած ձեռքերի վրայ, ձեռքեր, որոնք շարժւեցան և Բէրամը գնաց քիթ ու բերանը ջարդելու տասը քայլ հեռուում գտնուող քարակոյտերի վրայ... Բարձրացաւ մի ընդհանուր ծիծաղ. ծերունի փէշլեանը ժրպտեց և ասաց ինքնիրան:

— Եւ ես չիմարս վախենում էի այս տղայից...

Ասաց, երկու քայլ արաւ և պատրաստեց կրկէսից դուրս գնալու. բայց յանկարծ վախեցած ետ ետ քաշեց: Բէրամը, գլուխը ջարդւած, քիթ-բերանը արևնոտ Բէրամը գալիս էր դէպի նա և աղաղակում:

— Սպասիր, դեռ ևս չեմ յաղթւել...

Նա երեքում էր, արիւնը նրա գլխից և դէմքից աղբիւրի պէս վազելով ծածկում էր շորերը և ներկում դէմքը, բայց նա գալիս էր բռունցքը սեղմած, գալիս էր ուղղակի...

Այս անգամ ծերունի փէշլեանը իրաւամբ վախ դգաց, չետոյ խղճաց Բէրամին, ուստի և միտքը դրեց նրան ձգելու չաղխատել, այլ միայն պաշտպանելու: Սկու Բէրամը, նորեց գրկեց փէշլեանի հաստ մէջքը, նորեց իր արևնոտ գլուխը կռթնեցրեց նրա լայն կուրծքին և այնպէս ցնցեց փէշլեանին որ սա մոռանալով Բէրամին խղճալու մտադրութիւնը, երկրորդ անգամ բարձրացրեց նրան և այնպէս շարտեց դէպի հեռու, որ խեղճ երկտասարդն ընկաւ, ձախ թևը կտարեց և ուշաթափւեց:

— Այս անգամ վերջացաւ, գոչեց ժողովուրդը:

— Ի՞նչ յամառն է, բացագանչեցին փէշլեանները:

Քէրիմ խանը ծիծաղեց ընկած Բէրամի վրայ, իսկ ծերունի փէշլեանը մօտեցաւ, իր շորերն և սկսեց հագնուլ... Ըմբշամարտութիւնը վերջացած համարեց և Քէրիմ-խանը վեր կացաւ գնալու:

Յանկարծ ընկած Բէրամը ուշքի եկաւ, բարձրացաւ, ոտդռչուն քայլերով, հրեց ամբոխը, մօտեցաւ հագնող փէշլեանին և որչափ ոյժ ունէր՝ գոռաց:

— Սպասիր, դեռ ես չեմ յաղթւել...

Բոլորը կանգ առին, սաղութիւնը կատարեալ էր. ծերունի փէշլեանը հեռացած ետ քաշեց և բացագանչեց:

— Բայց էլ ողջ տեղդ չի մնացել, անմիտ.

— Աջ թևս դեռ ողջ է, ժպտեց Բէրամը և յոռտջացաւ դէպի նա:

Փէշլեանը չուզեց, նա մի տեսակ սարսափով նայեց այդ թոյլ կազմւածքով ուժեղ կամքի վրայ և փոքր ինչ մտածելուց յետոյ՝ դարձաւ դէպի Քէրիմ-խանը և ասաց:

— Այ, խոսնն ասրած կենայ, ես հրաժարուամ եմ սրա հետ կռուելուց . . .

— Կռուենք, տղադակեց Բէրամբ — գեռ դու չես յաղթել, իսկ ես պիտի յաղթեմ քեզ . . .

— Կռուենքք, ասաց Քէրիմ-խանը ժպտելով:

— Այ, կրկնեց փէհլեւանը մօտենալով թագաւորին— այս տղան հազուագիւտ մի տղայ է, սրա յանդգնութիւնը և յամառութիւնը, սրա կամքի երկաթէ ոյժը աւելի մեծ գործեր կարող են տեսնել, քան թէ իմ և քո շատ քաջ զօրապետներին քաջութիւնները . . . խան, յանդգնութիւնը եւ յամառութիւնը հաւատար են մի ամբողջ քաջութեան . . . Աստու է այս տղան, պահիր սրան քո գնդին մէջ և սա է, որին շայրները ասպապուամ պիտի նւիրեն իրանց երկնային գրիչները . . .

Քէրիմ-խանը լսեց նրան և այսպէս Բէրամբ մտաւ Քէրիմ-խանի գնդի մէջ, բայց այնքան թույլ էր նա, այնքան նիւար, որ նրա անունը մնաց «Փչեմ ընկնիս»:

Այլ Իրանի և թուրանի ժողովուրդ, այս միևեռօք «Փչեմ-ընկնիս» էր, որն ազատեց հայրենիքը իր սուրբ արիւնքով և զրա մէջ գտաւ իր վարձատրութիւնը . . .

Բ.

Սա միջոցներում էր, որ Սպահանի Բախտարները կատարել էին և Քէրիմ-խանի երկրի սահմանները օտար տակ առած այրում, ջարդում, քանդում ու ամեն անասի բարբարոսութիւններ անում էին . . . Աստուած եթէ ուզենար մի մեղաւոր ժողովուրդի պատուհասել, չէր կարող այդքան անգթութիւններ

անել, այդչափ արիւն թափել, որքան անում և թափում էին Բախտարները . . . Ժողովուրդը թողած իր հողը, տուն ու տեղը՝ փախչում-ցրում էին դէպի լեռները: Իսկ թշնամին փրշրելով ամեն ինչ, աւերելով գիւղեր, վառելով դաշտեր, արիւնով կարմրեցնելով մեր երկրի սուրբ հողերը՝ խումբ առ խումբ մօտենում էին Նիրագին:

Քէրիմ-խանին հասաւ գուժկանը. խանը հաւաքեց իր զօրքը և թշնամու դէմ գնաց, բայց հէնց առաջին ճակատամարտում յաղթեց նա և հազիւ 500 ձիաւորների հետ փախչելով՝ ամբողջաւ Քուհ ամրոցի մէջ, լուր ուղարկելով Նիրագ օգնական զօրք գալու համար:

Բախտարները այդ յաղթութիւնը տանելուց չեսոյ հաւաքեցին, իրանցից մէկին ընտրեցին զօրավար և կանոնաւոր կերպով սրեցին յառաջանալ դէպի Քուհ, ծածանելով իրանց սպիտակ դրօշակը, որի վրայ նկարուած էր մի գալարուած ահեղ վիշապ:

Քէրիմ-խանի դրութիւնն անտանելի էր. օգնական զօրք չէր հասնում. թէև բերդն անմատչելի էր և պաշար շատ կար, բայց Քէրիմ խանը կատաղութիւնից իրան կտրտում էր, երբ ամրոցի բարձրութիւնից տեսնում էր ժողովուրդի կրած տանջանքը բարբարոս Բախտարների ձեռքից:

Սի գիշեր նա տեսաւ թէ ինչպէս Բախտարները մի գիւղ վառել, կրակի վրայ խորովում էին գիւղացիներին, որոնց գլուխները ցցած իրանց երկար նիզակների վրայ, այլանդակ պար էին կազմել վառուղ գիւղի շուրջը և գիւղացոց օրհասական աղաղակները իրացնել չէին կարողանում նրանց խաղաղ ունոցներով . . .

Նրա արիւնը եռ եկաւ, նա դարձաւ իրեն շրջապատող
գորապետներին և զինւորներին ու ասաց:

— Մըթէ չրկան ձեր մէջ մարդիկ, որ ազատեն հայրենի-
քը այդ բարբարոսների ձեռքից:

Ամենքը լռեցին, ոչ ոք չէր համարձակուի իջնել 1000-ից
աւելի կատաղի խուժանի դէմ:

— Է՛հ, գոչեց այն ժամանակ խանը—ուրեմն թող կոր-
ծանւի այն ազգը, որ իր հայրենիքը գերութիւնից ազատե-
լու սիրա ունեցող որդիք չունի . . .

Եւ հիւանդացաւ Քէրիմ խանը, գրեց իր կտակը ու կամե-
նում էր մեռնել, բայց միւս օրը Քէրիմը խնդրեց խանին
տեսնել. եկաւ ընկաւ թագաւորի օտքը և աղաղակեց:

— Թագաւորը ողջ կենայ, մեզ հրաման տուր դուրս գնալ
կուսելու այդ բարբարոսների դէմ. մենք հարիւր հոգի ենք,
մեռնելու պատրաստ մարդիկ, իսկ գլխաւորները ես և իմ ըն-
կեր Ֆէրրաջն ենք:

Քէրիմ խանը ծիծաղեց:

— Կորկը, ասաց,— իմ փէհլեաններս վախենում են մեռ-
նելուց, դ՞ու ուր մնացիր, պարոն „Փչեմ—ընկնիս“:— Ոչ էրբէք,
ասաց Քէրիմը,— խանը թող յիշէ, որ ես „Փչեմ—ընկնես“ եմ,
երբ կամենամ. իսկ մինչև այժմ դեռ չեմ կամեցել, մանաւանդ
այժմ բոլորովին չեմ կամենում . . .

Այնքան ամուր ձայնով և խորխուրթեամբ ասաց նա այդ
խօսքերը, որ Քէրիմ-խանի մէջ ծագեց մի փոքրիկ յուր և նա ասաց:

— Գնացէ՛ք, եթէ ոչինչ չէք անել, գոնէ կուսելով կըմեռ-
նիք . . . Քէրիմն ու Ֆէրրաջը ընկան հարիւր գնդերների

տուջի և մթնով բերդից այնպէս դուրս գնացին դէպի դաշտը,
որ թշնամին չը նկատեց նրանց . . .

Սողալով և դաշոյները բերաններն առած, մի ձեռքում
նիզակ, թևի վրայ նետերի կապարճն ու ազեղը, նրանք խոտե-
րի միջից մօտեցան թշնամու բանակին և աշխատեցին ինչքան
կարելի է չընկնել կրակի լոյսով լուսաւորւած մասի մէջ:

Բախտակարները խումբ առ խումբ նստել էին կրակի լու-
սաւորւած մասերի մէջ, վրա էին եփել՝ գիւղի ոչխարները
մորթոտել, խորոված էին անում, իսկ նրանց շուրջը ընկել էին
կտրած գլուխներ, օտներ, ազիքները դուրս թափած դիակ-
ներ, սիւների կապած մերկանդամ կանաչք, խորոված և
սևացած կանանց մարմնի մասեր, յոշոտած մանուկներ և նի-
զակների վրայ ցցւած մօլլանների մօրուքաւոր գլուխներ ու գըլ-
խիվայր ալուղ կրակի խարովի մէջ կոխած կիսամեռ ծերու-
նիներ . . . Լաց, կօծ, հառաչ, օռնոցներ խառնուում էին Բախ-
տիարների խուպոս երգերին . . . և արիւնոտ էին նրանք և
նրանց նիզակներից արիւն էր կաթում, դաշտի խոտը կարմրել
էր ու արեան լճակների մէջ նմանում էր Գիլանի ու Մազան-
դարանի ճահիճներին . . .

Գիւղի տները քարուքանդ, կամ նոր փրում, կամ արդէն
մոխիր դառել և կամ հետզհետէ կործանուում էին. իսկ նրան-
ցից երբեմն դէպի օդը սլացող վառւած տախտակները գալիս,
աժժալով ընկնում էին արիւնի լճակների մէջ և պատճառ
դառնում վայրենիների արձակած ուրախ ոռնոցներին . . .

Քէրիմը և Ֆէրրաջն իրենց ընկերների հետ թաքնւած
խոտերի մէջ, այդ բոլորը տեսնում էին. նրանց աչքերը կատա-
ղութիւնից փայլում, չըթունքները դողում և արիւնը եռ էր

գալիս . . . փոքր մի կտ' Գէրբաջն անպատճառ կրճեաւէր
Թշնամու վրայ, եթէ Բէրամը չըբռնէր նրա թիւից և չը
մտմտար:

— Սպասիր, դեռ ժամանակը չէ . . .

Նրբ փրաւը մեծ-մեծ ամաններով և խորովածը շամփուր
ներով դրեց Բախտիարներին առաջ, երբ սրանք իրանց արիւնտո
ձեռներով մօտեցան կերակուրներին, Բէրամը նշան աւաւ իր
գօրքին ետ քաշելու և երբ նրանք հասել էին ամբողջ ստորո-
ւար, Բէրամը բաժանեց գօրքին մաս առ մաս և հրամայեց
սողալով մօտ գնալ Թշնամու խմբերին և սպասել յարձակման
նշանին:

Գրանից յետոյ նրանք նորից սրերն ասամենքով բռնած
մօտեցան Թշնամուն և սպասեցին:

Գիշերը մութն էր, երկինքն սուշի մթանանում էր դէպի
նա բարձրացող Թանձր ծուխից. կրակը բաւական տեղ սրփ-
ռում էր իր լոյսը, փռում էր մի գովարար քամի և ամբողջ կր-
քակն արծարծում . . . Ճաղթում էին տախտակներ, օդն էին
սլանում վառւած փայտեր, աղտողակում էին մեռածողները և օւ-
նում էր Թշնամին . . .

Յանկարծ լուեց մի սուլոց, նրան հետևեց ամեն կողմից
կատաղի աղաղակներ և Բէրամի գօրքն ուժգնութեամբ ըն-
կաւ Թշնամու վրայ. սկսեց կոտորած: Բախտիարները վազեցին
իրենց գէնքերին, բայց խառնեցին միմեանց և կարծելով թէ
Թշնամին շատ էր, շփոթեցին ու սկսեցին միմեանց կոտորել:
Կուրք շատ չբռնեց, որովհետև Բախտիարներն սկսեցին փախ-
չիլ և քիչ յետոյ սպասերագմի դաշտում մնացել էին Բէրամի
գօրքերից 10—15 հօգի, իսկ գեանի վրայ փռւած կային երեք

Թշնամու դիակի մօտ մի մեռածողի դիակ . . . Յաղթութիւնը
Բէրամինն էր . . .

Ամբողջ վերեց Բէրեմ-խանի գօրքը նկատեց այդ. Բէրեմ-
խանը վեր թռաւ անկողնից, ձի հեծաւ և իր մնացած գօր-
քովն շտապեց կուռի դաշտն իջնել:

Վազեց նա, ցնձաց նրա հօգին և նա Բէրամին փնդուեց,
Բէրամին, որ հայրենիքն ազատեց:

Բայց Բէրամը վերաւորւած էր և վերաւորւած բազմաթիւ
տեղերից: Նրա մարմնի ամեն կողմում ցլւած կային նետեր,
ամեն ուղղութեամբ տեսնում էին սրի լախ վէրքեր և արիւնը
լիովին ծածկել էր նրա գեղեցիկ դէմքը, նրան գտան մի ա-
րիւնի լճի մէջ ընկած, իսկ նրա կողքի վրայ փռւած էր
Թշնամու դրօշը . . . բոլորը շքապատեցին վերաւորին. Բէ-
րամը երբ տեսաւ Բէրեմ-խանին, բարձրացաւ, յեցաւ իր բարե-
կամի թիւերի վրայ, մի գոհ ակնարկ ձգեց իր չորս կողմը,
ժպտեց և դառնալով խանին՝ շնորհեց:

— Յաղթութիւնը մերն է . . .

Բէրեմ-խանը յուզւած վազեց դէպի նա, գրկեց նրա ա-
րիւնտ գլուխը, համբուրեց վերաւոր ճակատը և գոչեց:

— Դու դիւցազն ես, ես չըգիտեմ ինչով վարձատրեմ քեզ,
որովհետև քո արածը մեծ է քան աշխարհիս բոլոր վարձա-
տրութիւնները . . . ասա, ի՞նչ վարձատրութիւն կարող է
փոխարինել . . .

Բէրամը ժպտեց, ձեռքը տարաւ իր տակի դրօշակին,
որի վրայի վիշապն անտեսանելի էր եղել նրա արիւնից,
քաշեց, դուրս հանեց, բռնելով նրա կրթից, հաւաքեց վերջին
ոյժը, սպարզեց դրօշը դէպի խանը և ասաց:

— Այս վարձատրութիւնը քիչ է . . .

Եւ մի անգամ ևս ընկած դեպքերին նայեց ու շունչը
փչեց:

Քէրիմ-խանը շատ արտասուեց նրա վրայ, արտասուեց ամ-
բողջ գործը, արտասուեց Իրանը և Քուրանը, իսկ շայիբները
Թաթախեցին իրանց գրիչները արտասուքի մէջ և ողբացին
Նրան . . .

Եւ Թաղեցին Բահրամին Ներագում. նրա շիրիմի վրայ
ցցեցին Թշնամու դրօշը, որ ներկուէ էր դիւցազնի արեւնով և
Քէրիմ-խանը այդ դրօշի վրայ գրել տուաւ սոյն տողերը . . .

Սպիտակ էր . . . վիշապ ունէր իր վրայ. Բե-
րամը կարմրացրեց իր արիննով, ջնջեց վիշապը . . .
Եւ իր վարձատրութիւնը միայն նրա մէջ տեսաւ . . .

Մեռաւ Բէրամը, բայց չքմեռաւ նրա անունը. շայիբնե-
րը երգեցին Նրան, անմահացրին նրա գործը. իսկ նրա դրօշը
մի բոպէ իրենց ուտերին կրելու պատուից մեծ պատիւ չէր ճա-
նաչում պարսիկ փէհլեանը : . . .

Մինչև այժմ էլ, երբ պարսիկ ժողովուրդը երկու փէհլե-
անների գօտեմարտութեան է հրաւիրում, երբ մէկ աժդա-
հան միւսին գրորում է, իբր ընծայ ժողովրդից կամ իշխաննե-
րից ոչ Թէ փող կամ սլախատ, աստիճան կամ հլուրիփէրէ է կա-
մենում ստանալ . . . ոչ, այդ բոլորն ինչ արժեք այն պարզ
ձողի առջև, որ ահա ցցւած կենում է կրկէսի ծայրում, փող-
փողում է իր վրայի ոսկեթել եզրերով կարմիր Թաշկենակը:
Անմահ Բէրամի արեւնով ներկած Թշնամու դրօշակն լիշտ-
տակն է նա և կոչում է ըերամ (բահրամ) . . . Փէհլեանը

ուչ մի սլախատի, ոչ մի գանձի, ոչ մի աստիճանի կամ հլուրի փէ-
րիկ հասնել չի կամենում, եթէ չի կարող բէրամը ձեռն առնել,
դնել ուսի վրայ, պարձանքով փողոցները ման գալ և երգել
անմահ շայիբ Հիւսէյնի խօսքերը

„Արեւնովս գնեցի Թշնամու այս դրօշը,
Աշխարհի հետ չեմ փոխել կարմիր շորի այս կտորը...“

Դ Բ Ա Խ Տ

Արամիւր սարի ստորոտում, պարսկական մի քաղաքի մօտ էր բնակուում Աբդիւլ աղան. երկրի սէրն էր նա:

Սասանյան տել էր նրան իր բոլոր չարութիւնները, Սասանաւաճ վերցրել էր նրանից իրիշձը և Աշրիմանի՛ չար ոգիները օրը մինչև երեկոյ շնջում էին նոսա ականջին այնպիսի չարութիւններ, որոնցից ինքը Աշրիմանը ստիւում էր շատ անգամ:

Աբդիւլ աղան հարուստ էր թագաւորի պէս, նրա պալատը աշխարհիս ամենագեղեցիկ շէնքն էր, նրան էին գովասանում երգիչները, նրա պալատի գեղեցիկութիւնները յաճախ իր «էրժէնք» գրքի երեսներն էր լցնում Մանի նկարիչը՝ Նրա ձեռքը արար նժոյգներ էին, տաւարներ հաշուել չէր կարել. տուն ու տեղը և ամբարները այնչափ լիքն էին, որ շատ անգամ աւելորդ փոսած պաշարներ էին դուրս թափում պալատից:

Նւ եղաւ մի օր, որ հեռու Հնդստանից Արամիւր սարերի մօտ եկաւ մի դէրվիշ, նստեց Աբդիւլ աղայի դռան առաջ, սպասեց որ իր բաժինը տան և խնշրեց պալատի տիրոջ տեսնել:

1 Կրակապաշտների չարի աստածը,
2 Մի նշանատր առասպելական նկարիչ էր.

Աբդիւլ աղան իր հարեմումն էր, նա ծիծաղեց, երբ ասացին իրան որ մի դէրվիշ կամենում էր տեսնել Նրա հետ. հրամայեց ներս կանչել դէրվիշին հարեմը և մտքումը դրեց՝ նրան երգել-պարել տալով՝ զւարճանալ և զւարճացնել իր կանանց, Նւ եկաւ դէրվիշը, պատմեց Հնդստանի մասին, նկարագրեց ռաջաների փառքը, նրանց զւարճութիւնները, երգեց աղօթքներ և նստելով գետնի վրայ՝ սկսեց վայրենի մի պար:

Աբդիւլ աղան շատ ծիծաղեց, շատ զւարճացաւ, հրամայեց դէրվիշին կերակրել և յետոյ ասաց նրան.— Դէրվիշ բարա, դու երկիրներ ես տեսել, շատ ման ես եկել, առաճն ասո՞ւմ է, որ «շատ ապրողը չի շատ բան իմանալ, այլ շատ ման եկողը», արի՛—քեզ իմ պալատս ցոյց տամ, տեսնենք կրհաւանքս:

Նւ տարաւ նրան իր հետ, ցոյց տուաւ հայելապատ պատերով, գեղեցիկ ծաղիկներով և գոյնգոյն քարերով յատակած սրահները, ցոյց տուաւ իր թաւշապատ օթոցներով դիւանխանէն, շքեղ պատկերներով զարդարած բալխաման, առաջնորդեց իր հարեմի ներսը, ցոյց տուաւ կանանց, տարաւ գոմը՝ հիացրեց իր տաւարների քանակութիւնով և գեղեցիկ նժոյգներով... ցոյց տուաւ ցորենով և արմտիքով լիքը հսկայական ամբարները, անհամար կարասներով լիքը մառանը, յետոյ տարաւ պարտէզը որ ցոյց տար այդ աւազաններով լիքը պերճ այգին, ուր անհամար էին հովանաւորող նոճիներ, սրողատու ծառեր, ձկներով լիքը շատրւաններ և երփներանգ ծաղիկներով անուշահոտ ծաղկանոցներ...

Դէրվիշը տեսաւ բոլորը, սառնութեամբ նայեց պարտէզին, կանգ առաւ Աբդիւլ աղայի առաջ, նայեց նրան մի հեգնական ժպիտով և ասաց.



—Աբդիււ, որդիս, այս բոլորը լաւ են. լինէն է ամբարըդ, հիւրընկերները են կանայքդ. շքեղ է պարտէզդ և պերճ՝ պալատդ... այս բոլորն կէսը չունի հնդկական ուճան. բայց արե՛ր կնձ հետ, և ես քեզ մի քանի հարցեր ունիմ անելու:

Յետոյ արագութեամբ մօտ տարաւ պարտիզն ցանկասպատին, ցոյց տուաւ դրսում—ի՜նչ շատ հեռու երևցող տներն սուերակները և հարցրեց.

—Ի՞նչ են սրանք:

—Ա՛խ, սրանք, ծիծաղեց Աբդիււը—սրանք այն տներն են, որ ես քանդել տւի. որովհետև մտադիր եմ պարտէզս այս կողմից լայնացնել:

—Ի՞նչ եղան սրանց միջև բնակիչները:

—Վաճաղեցի, ասաց ազան—այդ հողը բոլորը իմն է, վաճառեցի նրանց հեռու:

—Ո՛ւր դնացին:

—Չըզխտեմ

—Լաւ ուրեմն, ասաց դէրեւը—ես գիտեմ. երեկ անցնում էի մի գետի ափից, տեսայ մի խումբ խեղճ մարդիկներ, որոնք մերկ, քաղցած և կեղտոտ էին... երեքը նրանցից մեռել էին ցրտից, երկուսը քաղցածութիւնից մեռնում էին, և միւսներն էլ խենթացածի պէս վրաս թափուեցին և խլեցին մօտիս ամենավերջին կտոր հացը... քաղցած էին սոված գայլերն պէս...

—Սխ, գոչեց ծիծաղելով Աբդիււը—Ե՛նչ գողեր են գրանք...

Դէրեւը տարաւ նրան պարտիզից դուրս, ցոյց տուաւ հեռու թերեցող գիւղերը և հարցրեց.

—Քո՞նք են դրանք:

—Իմն են:

—Ես անցայ այդ գիւղերից, ասաց դառնութեամբ դերեւը—գիւղերն մէջ դեռ ևս մի քանի կով և 3—4 ոչխարներ մնացել էին...

—Ի՛րաւ, բացառանչեց Աբդիււ աղան—ուրեմն վերակացւիս պիտի ուղարկել, որ գնայ այդ գիւղացիներից հարկը ժողովի:

—Սյո՛, աւելացրեց դէրեւը—յայտնիր վերակացւիդ, որ կար գիւղերն մէջ մէկը, որ մի կտոր չոր հաց դեռ ևս ունէր կռծելու...

Յետոյ դէրեւը բռութեամբ գնաց դէպի առազանը, մտածեց խորապէս և ասաց.

—Աբդիււ, պալատդ և պարտէզդ լաւ են, պակասում է ամենազխտաւորը... այդտեղ (և նա ցոյց տուաւ գիւղերը) դրախտ պիտի շինել և այն ժամանակ միակ դու կըլինիս, որ կունենաս մի պալատ, կեանք և դրախտ աշխարհիս վրայ, որոնցից զուրկ է Հնդկաստանի ամենամեծ ուճան իսկ...

Սօսաց, օրհնեց Աբդիււին, մի կտոր հաց դրաւ կողքի տապալակի մէջ և առանց ետ նայելու՝ հեռացաւ պալատից և երկրեց...

Աբդիււ աղան երկար մտածեց, թէ ի՞նչ ասեց դէրեւը, միթէ այս երկրի վրայ էլ կարելի էր դրախտ շինել:

Հրամայեց կանչել իր ծերունի լալէին 1, պատմեց նրան դէրեւի ասածը, հրամայեց շուտով ձի հեծնել վազել դէրեւի

1 Գրաստիարակ.

ետեւից և հարցնել իր կողմեց թէ այդ «դրախտը» թնչպէս պիտի շինել:

Կալէն ձի հեծաւ, վազեց դէպի շին ետեւից, հասաւ նրան մի գիւղում և յայտնեց նրան Արդիււ աղայի հրամանը:

Դէրեւիջը ժպտեց, ձեռքն առաւ իր փշոտ դաւազանը, կանգնեց լալէի առաջ և երգեց.

Որդի, անհաց սեղան չիս տեսել:

Կանանց, մարդկանց, մանկան արցունքը չիս տեսել . . .
Նրգեց, յետոյ մի խոր ակնարկ ձգեց ծերունու վրայ և հեռացաւ: Ծառան այդ խօսքերը միտը պահեց, արշաւանօք եկաւ իր տիրոջ մօտ և լսածը պատմեց նրան:

Արդիււը նախ գարմացաւ, իսկ յետոյ ծիծաղեց.

— Խենթ է այդ դերեւիջը, ասաց նա— իսկ ես արդէն մըտածեցի թէ այդ դրախտը ինչպէս պիտի շինել:

Նւ նա ձեռնարկեց դրախտ շինելու:

Քանդել տուաւ բոլոր գիւղացոց տները, դուրս արաւ նրանց իրանց չիւլ-փալասի հետ, թողեց նրանց բաց օդում, ուր մեռնել սկսեցին, խլեց նրանց հոգերը, իսկ իրանց՝ մտրակները տակ առնելով՝ բերաւ և ձրխապէս աշխատեցնել սկսեց մի մեծ և շքեղ պարտէզ շինելու, որ նա մտադիր էր դրախտի նման գեղեցկացնելու . . .

Երևեց նրա մէջ պալատներ, շաղրամաններ, ծառուղիներ, տնկեց հազարապիտ բոյսեր, տնկեց անմահական անուշահոտ ծաղկանոցներ... և ժողովուրդը լցած այդ շքեղ պարտիզի շուրջը՝ մեռնում էր և գոչում:

— Հինց հինց . . .

Անցան ամիսներ, դրախտն սկսում էր վեջանալ, ժողովուրդի կէսը կոտորել էր, իսկ կէսի ձայնը կտրւել «հինց» գոռալուց:

Վերջապէս, մի գեղեցիկ օր, Արդիււ աղան իր բարեկամներով և կանանցով եկաւ մտնելու պարտէզը, ուր պատրաստած էր մի խնջոյք գինիններով և համեղ կերակուրներով:

Եկաւ նա պարտէզի մօտ, հրամայեց մտրակելով հեռու քշել «հաց» գոռացող ամբոխին և ոտքը կոխեց իր այն պարտիզի շէմքի վրայ, որ շաղախւած էր ժողովուրդի արեւնով...

Նւ հագիւ թէ նա կամենում էր ներս մտնել, որ յանկարծ մթնացաւ երկինքը և սկսեց սաստիկ որոտալ. երկիրը շարժեց, մի թանձր մշուշ իսկոյն ծածկեց ամեն կողմ, լսեցան որոտումներ, աղաղակներ և թնդիւն...:

Ամեն ինչ խառնւեց միմեանց:

Նւ երբ մշուշը ցրւեց, հողի հետ հաւասարւել էին Արդիււի պալատը, պարտէզը և դրախտ կոչող այգին...

Ոչ մի հետք իսկ չէր մնացել այդ բոլոր արինաշաղաղ պերճութիւններից...

Մի ընդարձակ քարալից դաշտ միայն գոյացել էր նրա տեղը և այդ դաշտը շրջապատել էր զարմացած ժողովուրդը:

Անհետացել էին ինքը Արդիււը և նրա բոլոր հարեմը, ծառաները, համհարզը և իր բոլոր բարեկամները . . .

Այսպէս սրտովեց Յագդանը՝ Արդիււին. իսկ ժողովուրդը վարեց այն հողը, ցորեն ցանեց, տներ շինեց և սկսեց խաղաղութեամբ բնակւել այնտեղ:

Նւ երբ անցան օրեր, նոյն դէրեւիջը եկաւ անցնելու այդ

կողմերեց: Երբ ամեն ինչ տեսաւ, ծիծաղեց և ասաց.—Արդիւր
բռակա շինելու փոխարէն մի դժոխք շինեց, որի կրակի մէջ
այլեւց ինքը. իսկ երբ մեռաւ՝ այն ժամանակ միայն գոյացաւ
ղրախաղ . . .

Տաշեց մի տախտակ, տնկեց մի սիւն, տախտակը գամեց
Իրա վրայ և գրեց այնտեղ

Իրախաղ ոչ թէ Արդիւր շինեց,

Որ ժողովրդին կոտորեց,

Այլ նրան Եագրանը շինեց,

Որ ժողովրդին Արդիւլից ազատեց . . .



Ռ Ա Շ Ի Դ

Ա.

ԼՔրատիարը և Քէյլսորովը կուռում էին: Դարցի Դարցի
 Իրանը և Թուրանը աչնպէս կատաղութեամբ խիւռում
 էին իրար, որ ամբողջ աշխարհը արեան լճերի մէջ ողող-
 ւած էր: Այ ծերն էր խնայուած, ոչ մամուկը: Ահրի-
 մանը՝ Նազդանի 1 դէմն էր ելել, դժոխային բոլոր սև
 ոգիները երկրի վրայ էին թափուել, Ասմուղը 2 դեակիան
 քրքելով հսկայական քայլեր էր անում Իրանի և Թուրա-
 նի հսկաների մէջ: Գէմալէնդի նւերական թռչունը թաղ-
 նուել էր խոր քարայրներում, Ագէրգուշասարը 3 թւերը
 ծայրած թռել էր դէպի ամպերը, աթէշկահները 4,
 սկրած Ագէրմիհրից 5 մինչև Ագէրգէրգէհուշար՝ 6 մարել
 էին իրանց անշէջ կրակները, Գիւանի խաթանդ-ները 7

1). Հին կրակապաշտ պարսիկները հաւատում էին, որ կան
 երկու աստուածներ, Ահրիմանը՝ չար աստուած եւ Նազդանը՝ բարոյ.
 2. Ահրիմանի չար ոգիներից մէկը, որ խառնակութիւն եւ
 կռիւ ձգող է:
 3. Բոլոր կրօնատների պահապան հրեշտակը.
 4. Կրակատուն:
 5. Կրակապաշտ պարսիկները ունէին եօթն գիւաւոյ կրա-
 կարաններ, որոնցից ստաշները այդպէս էր կուռում:
 6. Եօթներորդ կրակարանը:
 7. Մի ամուր փայտով ծառ է, որից նետեր են շինում:

հատել էին, փէհլեանները սար ու ձոր էին դղողեցնում իրանց գերզգերով 8, ամբողջները միմեանց դէմ կրակ էին ժայթքեցնում, երկու թագաւորները անմատչելի տեղերում նստած իրանց յոյսը հետզհետէ ասպարէզ իջնող փէհլեաններին վրայ դրել՝ սրտատրոսի սպասում էին... և ժողովուրդը, Իրանի և Թուրանի հաց տուողը, կոտորում էր անխնայ, ոտի տակ էր գնում չնչին զեռուներին նման ճմբւում էր, ոչնչանում և զօրեղների բմծիծաղը շարժելուց բացի ուրիշ բանի պէտք չէր լինում... կերակրում էր զօրեղներին—այդ նրա պարտքն էր, կոտորում էին նրան իրան քրտինքը ուտողները—այդ դրանց թեթև հաճոյքն էր . . .

Իրանը և Թուրանը կուռն էին միմեանց դէմ. Բուստէմի մայրը դեռ նոր էր զգում իւր արգանդի ծանրութիւնը 9, Զալը—այդ հսկայ ծերունին 10 փէհլեանների գուրն անցած սարսափ էր տեսնում իւր շուքը... ոչ ոք նրանից իր թեւը չէր շարժում իր ոտքերի տակ ձգմուղ ժողովրդին պաշապանելու, ամբողջները դեռ ողջ էին, ապառաժները դեռ կանգուն—այդ բաւական էր թոյլ տալու, որ փէհլեանները փոքր ինչ հանգչին և ժպիտը դէմքին զւարճանան փոքրիկ կուռողների շահատակութեան, ժողովրդեան ճիչ ու լացի, չնչին պատերազմողների գործած չնչին—փոքրիկ խժողովուրդներին վրայ:

Զալը և փէհլեանները այնքան բարձր, այնքան մեծ էին, որ ժողովրդի անասելի նեղութիւնները միայն մի

8. Կոտոր ծայրով երկաթեայ ցոււ, որով հին փեհլեանները կուռն էին.
 9. Իբր թէ Բուստէմ փեհլեանը երբ մօր արգանդումս էր այնպէս ծանրութիւն էր պատճառում, որ մայրը շէր կարողանում մահ գալ:
 10. Բուստէմն հայրը, որը ծնելուց բոլորովին սպիտակ մազերով էր:

թեթև, փոքրիկ կնճիւռ էին բերում նրանց դէմքի վրայ և ուրիշ ոչ ինչ:

Բայց ուրեմն ի՞նչ աւելի. ելնէին ժողովուրդը պաշտպանելու, այդ զեռուներին համար մտածելու . . . Իրանի ոչ մի փէհլեան իրան այդքան չէր ցածացնել, նիզակին ձեռք անգամ չէր պարզել և մինչև իսկ չէր յուզել... ամօթ չէր լինել այդ հսկաների համար յուզել մի բուռ զեռուներին համար:

Իրանի ժողովուրդը, քրքրել պատմութիւնը, կարգաճահնամէդ 11, երգել տուր երգիչներիդ և կրտսնես, որ քո իշխաններդ և փէհլեաններդ սկսած ասաւածային Բուստէմից մինչև յետինը, որոնց դու երգում ես, որոնց դու ասաւածացնում և անմահացնում ես, որոնց անունը քո հացը քեզ մոռացնում է, քո գլուխը գժի գլուխ է դարձնում... որոնց համար դու տքնել ես, գրել ես, աշխատել ես, որոնց անունով միայն կարծում ես թէ գոյութիւն և անուն ունիս... այն, այն բոլոր դիւցազներդ՝ աշխարհդ, հողդ արևնով ներկել են ոչ թէ քեզ համար, ոչ թէ քս հացի, քո քրտինքի, քո հանգստութեան համար, այլ լոկ իրանց զւարճութեան, իրանց վառքի համար, արևնով բացելու հրէշային վախազի, քո կոծով խնճոյքներ կազմելու և իրանց խնջոյքների թէֆաղը 12 հայթայթելու զզւելի ցանկութեան համար . . .

Գու տեսի՞ր ես այն մշուշապատ, գոյնզգոյն և խորհրդաւոր անտառը, որ սկսում է Գիւլանի ծովից, ալեքաձև պարզում է մինչև լեռները, իջնում է մինչև

11. Ֆիրդուսի բանաստեղծի գլուխ գործոց գիրքը, որ բանաստեղծօրէն պատմում է պարսից թագաւորների պատմութիւնը:
 12. Հին ժամանակ փեհլեանները յաղթութիւնից յետոյ, մարդկային գանգերով էին զննի խմում ինչոյքներում, այդ գանգերը կուռն էին թէֆաղ:

անտառներ, մագլցում է մինչև սրածայր կատարներ, փուռում է մինչև նւիրական լեռը:

Գու տեսել ես նրա մէջ գտնուող քաղցր պտուղ տուղ հսկայ ընկուզենին, սիրուն և ամուր փայտով շմշատը, կուռնեա մատակարարող խաթանգը, սև գոյն տուղ գէրիբը, եաղէտը, ու թաբէրխունը, գէրէսը եւ կարծր փայտով, էրժէսը եւ օգտակար պտուղով և կեղևով, ազադն ու սալվին, թաջէքը ու զախիւր . . .

Գու տեսել ես նրա մէջ սիրուած անուշահոտ շքեղ ծաղիկները ներգիզը ու քարէսփիւր, սուտէսը ու խլորուն: Բանաստեղծներին սրտի տեղ գործածուող լեռան լալէն, լալան սիրտը այրած, լալան տապակած . . .

Տեսել ես դու անտառի այդ բոլոր օգտակար և գեղեցիկ ժողովուրդը, որը կազմում է անտառը, հանդարտութեամբ մեծանում է, շատանում, եր շուրջը սփռում է անուշահոտութիւն և օգտակարութիւն, ոչ ոքի չէ վնասում, ոչ ոք նրանից դժգոհ չէ. խաղաղ նա սպրում է ու ծնում, մեռնում է և տեղ տալիս ուրիշ նորերի:

Այդ և բոլոր տեսել ես, բայց տեսել ես նաև անտառային իշխաններին և փէհլեաններին—առւիժին և բէբրին, ինձին և վարազին, որոնք սպրում են անտառում, շնչում նրա օդը, կերակրում նրանով և սակայն բաւական չէ որ ոչնչացնում են անտառի խաղաղութիւնը, օտքերով տրորում են անուշահոտ ծաղիկները, ատամներով զարդ ու փշուր անում ծառերը, կոխտում, փչացնում են ամեն ինչ . . . և այդ բոլորը նրանք անում են ոչ թէ իրանց պէտքի համար, այլ որովհետև փչացնել և կտրտելը նրանց կեղտոտ հաճույքն է, նրանց ծիծաղ է պատճառում այդ անգոր թույլ արարածների օրհասը, ճխրուած և կտրուած դրութիւնը... նրանց քէֆն

է այդ, ինչպէս որ ձեր փէհլեանները քէֆն էր ձեզ ջարդել և ապա ծիծաղել ձեր ճիչ ու լացի, ձեր ողբալի դրութեան վրայ:

Իրան և Թուրան, պատմութիւնդ տխուր է, ես ի՛նչ երգեմ այժմ, այդ կատաղի փէհլեանները, արիւնարբու դիւցազներդ, ժողովուրդը կոտորող հսկաներդ...

Բ.

Ոչ . . . ես Ռաշիդը պիտի երգեմ:

Ասգոնի 13 ծովի, Մուրդար լճակի 14 և Գէմալէնդ լեռների 15 միջալայրումն է փուռում այն նւիրական անտառը, որ իր թաւոտ թւեղից մէկը պարզում է մինչև Ազիթթայջանը 16, իսկ իր երկայն օտքերը դէմ է տուել Թուրանի Գամանի-քուր լեռնաշղթային 17:

Այնտեղ—Փուլթ-քուհի մի սարի կրծքում, թւկունքը մի հում 18 ծառի տաւ՝ ճիւղերով շինած խրճր-թի մէջ էր, որ Ռաշիդը չենած իր գաւազանի վրայ, բռնած իր թոռ Ջիմշիդի ձեռքը՝ մտաւ և պատսպարեց:

Նա թողեց իր չորս կողմը վիտացող կոտորած ժողովուրդը, ծխացող գիւղերի աւերակները, արիւնով ողողւած դաշտերը, իր ոչնչացած բաղմամարդ ընտանիքը, թողեց միմեանց վրայ կրակ թափող ամբողջները, միմեանց

13. Հին պարսիկները Կասպից ծովին այդպէս էին կոչում

14. Պարսկաստանի Գիւսիսային սփում. Կասպից ծովի նգերին մի կիւ է:

15. Պարսկաստանի ամենաբարձր եւ նւիրական լեռն է, 18,000 ոտ. բարձրութեամբ:

16. Ատրպատականի Նահանգը:

17. Այդ լեռնաշղթան բաժանում է Իրանը Թուրանից.

18. Մի ծառ է, որի ծիւղերից կրակապաշտները մտքերին բռնած աղօթում են կրակի առջևը:

դէմ խնդրանոց փեհլեաններն որոտումը և արեւնհեղութիւնքն ու բռնած իր բազմամարդ ընտանիքնց միակողմ մնացող թրուան ձեռքը, զինւած թիրը-խաթանգով¹⁹ մտաւ անտառը և գնաց միայնանայու հոսմ ծառի ստորտում, որի ճիւղերիցը նա իր ձեռքն էր բռնում և ամեն առաւօտեան իւր դէմդէմի²⁰ աղօթքի մէջ խնդրում էր Եագդանից՝ փրկութիւն կոտորող ժողովուրդեան:

Ռաշիդը ծեր էր, նրա մագերի մէջ այլ ևս սև չէր մնացել, նրա մէջքը կռացել էր, ատամները թափուել էին, նրա ձեռք ու ոտքը դողում էին, բայց նրան Եագդանը թողել էր դեռ ևս իր սուր տեսութիւնը, առողջ խելքը և լսողութիւնը, նրան Եագդանը թողել էր դեռ ևս կարողութիւն խնամելու տասնևվեցամեայ Ջիմշիդին:

Ջիմշիդը գեղեցիկ էր որպէս նոր բացւած լուսինը առողջ էր և քաջ, երկարաչասակ ու յաղթանդամ, յանդուգն և կտրելի: Նա չէր ծնել մի ազնւականից, նա գիւղացի Ռաշիդի որդի՝ Խոսրովի որդին էր, մի պարզ երկրագործ, մի պարզ մահկանացու, որ դեռ նեախն ձեռք չէր գիւցրել, նիգակի կոթը չէր շօշախել, տապարի ծանրութեանը չէր վարժուել և կռիւների ֆէսդերից²¹ տեղեկութիւն բոլորովին չունէր:

Ռաշիդը ազատեց նրան ընդհանուր կոտորածից, քաշեց տարաւ անտառի մէջ, շինեց խաթանգից նեաեր, եղեգները և նիգակներ, թաղէքից²² տապարի կոթեր և պողպատեց սրածայր բերաններ, թողեց նրան անտառի վայրենութեան մէջ, մղեց դէպի անտառի բռնաւոր գագանները և ասաց նրան.

19. Խաթանգ ծառից շինած նետ.

20. Կրակապաշտների լուս աղօթքը:

21. Հնարք:

22. Մի ամուր փայտով ծառ է:

—Սովորը կուռել, սովորը յաղթել:
Նա Ջիմշիդը սովորում էր. նրա ոտնաձայնից այլ ևս դողալ սկսեցին աղւթները, նրա նետից խուսափում էին արջերը, նիգակից վարագները, նրա եքավիյոց²³ բէքբնէքը և նրա կրակոտ աչքերից փախուստ էր տալիս կատաղի առիւծը:

Իրանի և Թուրանի պատերազմը դեռ շարունակւում էր, դեռ ևս ժողովուրդը մի բուլէ հանգիստ վայելելու անկարողութեան մէջ էր. որովհետև կոտորում, ոչնչանում էր ահարկու փեհլեաններն ոտքերի տակ, որոնք սարուձոր դղրդացնելով միմեանց երկիրներն վրայ էին արշաւում և սկսելով ժողովուրդից՝ իրանց գէնքը պարզում էին մինչև ամբողջները:

Այդ բոլոր խռովութիւնների ժամանակ, Ջիմշիդը անտառի խորքերում գագանների հետ էր կուռում, երեկոյեան իր պապի հսկողութեամբ գէնքի վարժութիւններ էր անում և յետոյ լուսմ Ռաշիդին, որ սովորեցնում էր նրան ատել այդ բոլոր գօրեղ փեհլեաններին, բնաջնջ անել այն հսկայական ամուր աշտարակները, սիրել իր ասը ժողովրդեան ճնշողների վրայ և սիրել գիւղացուն, սիրել հողը, սիրել ժողովուրդը . . . Ջիմշիդը մեծանում էր այդպէս, նրա համար ատել էր դարձել գօրեղների փառքը, նա սովորեց ծիծաղել հսկաների մեծամարտութիւնների վրայ, սովորեց դահել մասնաւոր ընդհանուրին, մէկը հագարին, և այդպէս ասրեց նա իր պապի հսկողութեան տակ ու մեծացաւ:

Քսան տարեկան էր եղել. լայնացել էր նրա թիկունքը և առնակիան կուրծքը. ծնօտը սևանում էր, ջրգեղը ամբանում, աչքերը արծւի տեսողութեան վարժ-

23. Տափակ կարծ սուր, որ կողքիցն են կախում:

ուում և գէնքը շարժող ձեռքը անվրէպի յատկութեան տէր լինում: Նա իր նետով փռում էր գետին օդի միջից սաւառնող ամենափոքր ծտին, նիզակով տապալում էր իր վրայ վազող վարազին, իր խորամանկութեամբ գերազանցում էր աղւեսին և նրան շատ անգամ ողջ բռնած իր պապի առջևն էր բերում, իսկ բերել դէմնա իւր միակ երավիյդով յաղթանակ էր տանում . . . Եւ օրհնում էր նրան Ռաշիդը, իր Զէմդէմէի մեծ մասը նրան նւիրում ու միշտ զոչում էր:

—Շնորհք տուր, մեծդ Յագդան, որ Զիմշիդը փրկէ տառապող ժողովրդեան:

Եւ երբ տեսնում էր Զիմշիդի յաղթանակները—Յագդան, զոչում էր— փրկել նրան սնտուխական պարծանքներէց, մի տար նրան մեծութիւն և իշխանութիւն, այլ պահիր նրան հասարակ հասարակ ժողովրդի համար:

Այդ միջոցներում նա իր երեւակալութիւնը բոբրօքում էր, ամեն միջոց ի գործ էր դնում և սոսկալի գոյներով Զիմշիդի ականջներին էր հնչեցնում ժողովրդի թշաւութիւնները, Արհիմանի բոլոր դեւերն օգնութեան էր կանչում փեհլեաններին զգուշ դարձնելու համար Զիմշիդի աչքին, խօսում էր նրան Աւէստայից 24, պատմում էր նրան Զարդիւշտի կեանքը 25, Դէմաւէնդի նւիրական թռչունի մասին:

Եւ Զիմշիդը մեծանում էր նրա հսկողութեան տակ:

Գ.

Σ ասաւ Նովրուզի²⁶ օրերը, կռիւր Իրանի և Քուրանի մէջ պահ մի դադար առաւ, իշխանները իրանց ամբողջները բարձրացան Նովրուզը տօնելու, ժողովուրդը ժողո-

24. Կրակապաշտների ս. գիրքը.
25. Կրակապաշտութեան Կիմսադիւրը.
26. Նոր տարու օրերը:

վեց իր մնացորդ ունեցածը, օգուտ քաղեց այդ զինադատարեց և ցրեցաւ լեռներն մէջ. երկիրը մնաց անապատ և խոպան. Քուրանը նորանոր փեհլեաններ պատրաստեց, իսկ այդ միջոցին Իրանի համար ծնել էր Ռուստէմը, որ իր մանուկ հասակից սկսած դողացնում էր բոլորին, ամենքը զուշակում էին, որ ծնել էր Իրանի փրկիչը, երկարամեայ կռուներն վերջ տուղը:

Այդ միջոցին Ռաշիդը գտաւ իր թոռան համար գէնք և ձի, խրատեց նրան, Զէմդէմէի աղօթքի հրաւիրեց կրակի մօտ, տաւ նրան իր օրհնութիւնը և ասաց.

—Զիմշիդ, հասաւ այն օրը, երբ դու պէտք է մըտնես այնտեղ—դաշտը, գէնքը հանես և պաշտպանես մեր ժողովրդին, որ տրորում է հսկաների ոտքերի տակ: Զիմշիդ, տարններով խնամեցի քեզ, Յագդանից կեանք խնդրեցի քեզ այդ հասակիդ հասցնելու համար, խլեցի քեզ մահից, իմ տարններս քեզ վրայ վատնեցի, գիշերը անարիդ մօտ հսկեցի, ցերեկը դողալով քեզ սպասեցի, արտասուքներովս ոտներդ մաքրեցի, շունչովս քեզ հոգի տւի, որ այսօր դու իջնես այն արևնով ողողած դաշտը և պաշտպանես քո եղբայրներին, որոնք ճմլում, ձգմուռում են երկու կողմի անգութ քէֆ-անողներն ոտքերի տակ, անխնայ կոտորում են, վշանում: Դու դրանց որդին ես Զիմշիդ, գնաւ պաշտպանիր նրանց, ասիւր այդ հսկաներին, որովհետև «ախրապետութեան փառքը մի գիւղացու գանգատին չարժի»²⁷. . . մի աշխատիր փառքի հասնել—դա քեզ համար թող օձ լինի, մի ձգնիր գեղեցկուհու տիրապատել—նա քեզ համար թող մեղկացուցիչ խմելիք լինի, մի վազել տիրելու փափագի ետևից, դա քեզ համար թող թոյն լինի: Պաշտպանիր ժողովուրդը, ազատիր նրան, յետոյ գէնքերդ մի կողմ դիւր և գընաւ նրանց հետ արօրի կոթը բռնելու: Ռաշիդը—պապը

մինչև ծերանալը այդպէս է եղել, այդպէս էլ մեռնում է. նա դեռ չի մեռնել, Եագդանը նրան փոքր ինչ էլ կեանք կըտայ, մինչև որ նա տեսնէ իր եղբայրներին ազատաձէ իր Ջիմշիդի ձեռքով. Ջիմշիդ, դու ամբօրիս որդին ես, քո հայրը—քո ծնողը քեզ է սպասում, նա ծերացել է, նա խեղճ է, նա իր կեանքը քեզ վրայ է փչացրել, իր աշխուժութիւնը քեզ զօրեղացնելու համար է զոհել և այժմ ձեռները դէպի քեզ պարզած՝ սպասում է քեզ . . . Գնա, Ջիմշիդ, Ռաշիդը կըսպասի այտեղ մինչև որ դու ազատես ծնողիդ, յետոյ նա կըմեռնի հանգիստ և քեզ օրհնելով:

Ասաց ծերունին, հագցրեց Ջիմշիդին քուրդմանը²⁸, զրահը, կապեց կողքիցը եքավիյզը, խրեց նրա գօտիի մէջ նաջախը²⁹, թիկունքի վրայ կապեց խաթանգի ծառից շինած ընտիր նետերի կապարճը, թևին ձգեց աղեղը, տըլաւ ձեռքը նիզակը, օրհնեց նրան, համբուրեց, արտասուեց և ճանապարհ դրեց դէպի Իրան:

Յետոյ առաւ ձեռքը հումի մի ձիւղ, վառեց նւերական կըակը, չոգեց նրա առջև և աղօթեց.

—Յագդան, ասաց նա—օգնիւր Ջիմշիդին իր սուրբ գործի մէջ:

Գ.

Գնաց Ջիմշիդը Իրան, մտաւ կուռի մէջ, թափանցեց ժողովրդի խեղճութեան մէջ, շատ կուռներ մղեց նրանց պաշտպանելու համար, շատ փեհլեանները գլորեց և իր գլխին խմբելով ժողովրդից մի մաս, գրոհ տուաւ աւերածու ամրոցների վրայ:

27. Հաճիգ բախաստեղծի խօսքերն են:
28. Մի տեսակ հագուստ է, որ հագնում են գրանի տակը
29. Սրածայր տապար:

Նրա անուըը հասաւ մինչև Քէյխոսրովին, հասաւ և Զալի ականջը. փեհլեանները սկզբում ծիծաղեցին նրա վրայ, յետոյ զարմացան, խմբերով յարձակեցին ցրելու նրա «հասարակ» խումբը, բայց վերջապէս հասկացան, որ Ջիմշիդը ինչ էր կամենում ասել. փոքր առ փոքր պակասում էին ժողովրդին կոխտելու հաճոյքները և Ջիմշիդը պահպան հրեշտակի փառքն էր վայելում, երբ Ահրիմանի սև ոգիները մի մեծ խորհուրդ գումարեցին և մտածում էին թէ ինչ կերպով կործանեն նրան:

Նրանք ընտրեցին իրանց Թերասպ ընկերին և պատիւրեցին փորձել Ջիմշիդին:

Ֆիրասպ գնաց Ջիմշիդի մօտ, առաջարկեց նրան փառք և պետութիւն, բայց Ջիմշիդը մերժեց:

Մէջոտեղ եկաւ Արմուղը³⁰, գրգռեց նրա ընկերները, ատելութիւն սերմանեց նրա խմբի մէջ, բայց Ջիմշիդը չը յաղթւեց Արմուղին, նա հաշտեցրեց բոլորին և Արմուղին իրանց միջից բոլորովին վանելու համար, եփեց աշխիտրէ³¹ և կերան բոլորը:

Ոգիները այս անգամ առաջ մղեցին Աշք³² ոգիին: Եւ ելաւ ոգին իր քարայրից, մտաւ այն անտառը, ուր Ջիմշիդը երբեմն գնում էր որսի և քնում էր մի ծառի հովանիի տակ:

Աշքը դտաւ նրան քնած, զգուշութեամբ առաւ իր թևերի վրայ, կաշմակի արագութեամբ պատուեց օդը, թռաւ լեռների վրայով, տարաւ դէպի Քուրան, մօտեցաւ Նիմդէմ ամրոցին, տանիքի դռնից ներս սարտելով մտաւ ամրոցի հարեմը, բաց արեց դռները և քնած Ջիմշիդին

30. Խառնաշիւղ ոգի:
31. Հաշտութեան հալա, որը եփում են ուտում էին հաշտողները:
32. Սէր սերմանող ոգին:

մտորեց Դահաբ իշխանն անդիկայ Ջոււհէն ննջարանը...

Այդ անելուց յետոյ, մղեց նրա կուրծքի մէջ սիրոյ մի նետ, ժպտեց դիւային ժպտով և անյայտացաւ . . .

Անցան օրեր, Ջիմշիդի ընկերները նրան շատ փրճառելուց յետոյ, ցրեցին: Ջիմշիդի անյայտանալը քաջալերեց փեհլեաններին, որոնք ասպարէզ իջան և նորից իրանց խնջոյքներն համար սկսեցին թեփաղներ³³ պատրաստել: Ժողովուրդը կորցրել էր իր պաշտպանը:

Նւ ահա մի ամիս յետոյ լուր տարածւեց, որ Ջիմշիդը ամբողջանում է Թուրանի մի իշխանուհու վրայ և իր նշանածի մօտ իր հունարը³⁴ ցոյց տալու համար յայտնել է, որ Նիմդէմ ամբողջ հրապարակում նա կը կուռ բոլոր ներկայացող փեհլեաններն հետ:

Վազեց ժողովուրդը ամեն կողմից դէպի Նիմդէմ, եկան փեհլեաններ, եկաւ էֆրասիաթ թագաւորը՝ ներկայ գտնւելու այդ կուռին:

Նւ առաւօտեան շուտով հնչեցին թմբուկներն ու շեփորները, հրապարակը լեքն էր խուռն բազմութեամբ, իսկ հետոզհետէ երեք փեհլեաններ հասնելով՝ սպասում էին Ջիմշիդին, որ այդ միջոցին իր նշանածի ոտքերն մօտ նստած՝ լողում էր Ատրասի³⁵ վրայ:

Ե.

Սկսեց մենամարտը. Ջիմշիդը հետոզհետէ շամփրեց երկու փեհլեաններին, յետոյ կանգնեց երրորդն դէմը և խրոխտալով շարժեց պողպատեայ ծայրով նիզակը:

33. Մարդկային գանգոյից զննի գաւաթներ:

34. Հնարքներ:

35. Եօթներորդ երկնքը, որ համարում է բոլորովին մաորը եւ անասող:

Ջիմշիդը այդ ևս չէր կրում իր հասարակ հագուստը. նա այժմ իշխան էր, նրա հագուստը շքեղ էր, զէնքերը ընտիր և ձին արարական, որի վրայ նա բազմած՝ արհամարհական ակնարկներ էր ձգում իրան նայող ժողովրդին:

Հնչեց շեփորը, Ջիմշիդը մղեց ձիու կողերը և օրացաւ փեհլեանն իրայ:

Այդ միջոցին ասպարէզ էր մտնում մի ձիււոր. նա հագել էր սև և դէմքն վրայ էլ կրում էր մի դիմակ: Նրա ձին մի շատ հասարակ ձի էր, նիզակը հնացած, իսկ ինքը ձիււորը կարճահասակ անձն էր:

Ամեն ինչ լուեց, որովհետև ոչ ոք չիմացաւ թէ ով էր այդ տարօրինակ փեհլեանը:

Ջիմշիդն իսկ կանգ առաւ կուռելուց, չտիեց ոտքից մինչև գլուխ այդ նոր ձիււորին և գոչեց նրան.

—Ո՛վ ես դու, փեհլեան, որ դիմակով ես յանդուհնում գալ թագաւորն և իմ անջև:

Ձիււորը լուեց, դողաց, ձին առաջ քշեց և խրոխտ ձայնով պատասխանեց.

—Յաղթիր դրան և յետոյ ինձ հետ գործ կունենաս: Ջիմշիդը դողաց այդ ձայնը լսելիս, գունաթափուեց, նիզակը ձեռքից ցած ձգեց և քարացաւ:

—Հնչր իմ, մոմուաց նա:

—Հնչր, ծիծաղեց ձիււորը—հայդ մի գիւղացի էր, պատգ մի արևոր, իսկ դու մի մեծ փեհլեան . . . մեծ փեհլեան Ջիմշիդ, ժողովուրդը ատում է քեզ և այդ ատելութիւնը մարմնացած իմ մէջ՝ ելիւ է քո դէմը կուռելու, թող քո հաւասարիդ և բարձրացուր ինձ վրայ նիզակը . . .

Ջիմշիդը պատի գոյն ստացաւ, գլուխը կուայրեց և մոմուաց:

—Հայր իմ, քեզ դէմ կուել չեմ կարող:

Այն ժամանակ ձիւտորը հանեց դիմակը և բոլորը գարմացան, որովհետև նա մի արևոք ծերունի էր կուզ մէջքով, մի հատ սև չըկար նրա մագերի մէջ, մի կտոր միս չէր երևում նրա մարմնում, սակայն նրա աչքերը փայլում էին, շրթունքները դողում և նրա չոր ձեռքը շղաձգութեամբ սեղմում էր նիզակի կոթը:

—Այո, ասաց նա յառաջ գարով—ես Ռաշիդն եմ, քո պապը. ես գալիս եմ Թուրքի-բուհից ոչնչացնելու քեզ. եթէ դու չըթողնես քեզ փչացնող այդ բոլոր շքեղութիւնը. դու դաւաճանեցիր այն նպատակը, որի համար ծերունի Ռաշիդը փչացրեց իր կեանքը, անքուն գիշերներ անցրեց, քաղցած՝ օրեր տեսաւ, ծովի չափ արտասուք թափեց, Եագդանի բարկութիւնը կրեց . . . այդ բոլորը Ռաշիդը կրեց քեզ համար, Ջիմշիդ, քեզ, որ խմեցիր մեղկութեան բաժակը և ոչ միայն սկսեցիր միանալ ժողովրդի և հայրենիքի թշնամու հետ, այլ և ինքը էլ գէնք բարձրացրիւ նրա դէմ: Ջիմշիդ, լսի՛ր քեզ խնամող, քեզնով ապրող ծերունի պապիկը խօսքերը, եկ վայր ձգի՛ր վրայիցդ այդ ծիրանին, վանի՛ր քեզանից Աշք ոգիին, դարձի՛ր հայրենիք, սրբի՛ր ժողովրդի արտասուքը. Ջիմշիդ, լսի՛ր, աղաչում է քեզ քո պապը, սպասում է քեզ քո ազգը. . .

Ասաց, իր բոցափայլ աչքերը սևեռեց Ջիմշիդի վրայ և գունաթափ սպասեց.

Ջիմշիդը ցնցեց գլուխը և մոմռաց.

—Չեմ կարող, հայր:

Այն ժամանակ ծերունին բարձրացաւ իր թամբի վրայ, ճակատը կնձռեց, ճօճեց նիզակը, յառաջ վազեց. —Յագդան, գոչեց ահեղ ձայնով—նեղիւր ինձ ուրեմն, որ գոհում եմ հայրենիքին իմ սիրած թոռը, որ դաւաճան եղաւ . . .

Եւ ձգեց նիզակը:
Գնաց նիզակը, շեշտակի խրեց Ջիմշիդի կրծքի մէջ. Ջիմշիդը երեքաց թամբի վրայ.

—Հայր իմ, գոչեց և փուռեց գետին:

Ռաշիդը կանգ առաւ, իր սիրած թոռան վերջին խօսքը ճնշեց նրա սիրտը. ցած թռաւ ձիւուց, սլահ մի գունաթափ դիտեց մեռնողին, յետոյ նորից ցնցեց իր ալեգարդ գլուխը, աչքերից հոսեցրեց երկու կաթիլ արտասուք և աղաղակեց.

—Ո՛վ Եագդան, սու հոգիս:

Ասաց, դողդոջիւն քայլերով մօտեցաւ Ջիմշիդի դիակին, խրեց եքավեյզը իր կրծքում և ընկնելով իր թոռան դիակի վրայ, գրկեց նրան . . .

Բոլորը սառել էին:

Ձայլը, ծերունի Ձայլը, որ նստել էր թագաւորի մօտ՝ եղաւ իր տեղից, մօտեցաւ դիակներին, պատկառանքով հանեց իր լայն սուրը, ծնկան վրայ կտորելով ձգեց ծերունու վրայ, յետոյ դարձաւ ամենքին և ասաց.

—Չըկայ մեծ՝ քան Ռաշիդը . . .

Ու կուսնալով համբուրեց ծերունու ճակատը:

Այսպէս կորաւ Ջիմշիդը. այսպէս մեռաւ Ռաշիդը: Ջիմշիդին թշնամին ողբաց, փեհլեանների շայքը երգեց, Ռաշիդին ազգը և ժողովրդեան աշուղը. Ջիմշիդի համար ազնւակհանը ցաւեց, Ռաշիդի համար գիւղացին:

Այնտեղ—անտառում, Հուսէ Ժառի տակ հանգչում է Ռաշիդը, նրա գերեզմանը հողի հետ հաւասարել է, բայց նրա վրայի ծառի ճիւղերը կուսցել են վրան կապկըպած շորի կտորները, որովհետև ով որ անցնում է այնտեղից, աղօթում է նրա վրայ, կտրում է մի կտոր իր հագուստից, նւիրում է նրան հովանաւորոջ ծառին և մղմնջում:

—Չըկայ մեծ՝ քան Ռաշիդը . . .



Գինը 5 կոպ.

18953

2013

